

ՊԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար 12 Տր.
Տարեկան 6
Վեցամսեայ 15
Արտասահմանի համար տարեկան 8
Վեցամսեայ 3

Ստանդարտի համար 3
Տարեկան 4.50
Վեցամսեայ 1.50

Մանուցումն տողը սոսա ինն երեսին համար 40 ս.
Իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ կ. երեք կեանքի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայն
Վառույթի համար ձեռք 40 սանթիմ

ՉԱՐՔԻՆ

ՈՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂՈՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՈՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐԻԹ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ԵՐԵՎԱՆ

Նամակ եւ գրամ գրկեցի
Խմբագրութեան համար
գին

Редакция на вѣстанкѣ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoun“
Varna (Bulgarie)

Արտասահմանի համար
ձեռք
( 20 ՍԱՆԹԻՄ )
Պուշկարիոյ համար
ձեռք
( 15 ՍԱՆԹԻՄ )

Գրույթիս ևս չեն տուիր

«ՇԱՐՔՈՒՄ»-Ի ԲԱՏԱՆՈՐԴ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՏԱՆԳԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵ

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԲՈՂՈՔԸ

Անցեալ կիրակի Վառույթի Վե.
րակազմեալ Հնչակեաններու մաս.
նաճիկին նախաձեռնութեամբ
հոգեհանգստեան պաշտօն կա.
տարուեցաւ Միսոյի և Զիթճեանի
համար:

Պաշտօնը կատարուելէն վերջ
ժողովուրդը բակին մէջ մնաց լսե.
լու մասնաճիւղին կողմէն նշա.
նակուած ատենախօսները, որոնք
էին Պ. Պ. Ճանկիւլեան և Գուր.
պէթեան:

Մասնաճիւղին կողմէն երկու
պարոններ և Պ. Վարդօէն խընդ.
րեցին խօսիլ, աւելցնելով որ
ժողովուրդը կուզէ Վերջինս
հիմնական պատճառներ ցոյց տա.
լով որոնք սկզբունքի խնդիրներ
էին և կը վերաբերէին անհա.
տական յարաբերութիւններու,
մերժեց հրաւիրող պարոններուն
միանգամայն յայտարարելով որ
ժողովուրդը եթէ կուզէ ինքը
կրնայ յայտնել իրեն ցանկու.
թիւնը: Ժողովուրդը չուշայցաւ իր
ցանկութիւնը բարձրաձայն յայ.
տարարել, ու Վարդօն դիմա.
ւորեց ծափահարութեամբ:

Պ. Բանաստեղծը գրեթէ խօսեցաւ
այն, ինչ որ ըսած էր դժարժումի
միջոցաւ պարսաւագրի մասին ը.
րած առաջարկին մէջ: Միան.
գամայն բացատրելով որ ամեն
ժողովրդի քեանքը երբ փոթոր.
կած վիճակի մէջ կը գտնուի, տեղի
կունենան այդ տեսակ ոճիրներ:
Միայն պէտք չէ որ ժողովուրդը
իր պաղարիւնութիւնը կորսնցնէ
և ատենութեամբ վերաբերի գէպի
ամբողջ կուսակցութիւն մը, այլ
պիտի պահանջէ որ այդ ոճիրնե.
րուն համար բացատրութիւն
տրուին և բուն մեղաւորները պատ.
ժուին, երբ ոճիրները կատար.
ուած են զուր տեղը: Բանաստեղ.
շարունակ կընդմիջուէր ծափա.
րութիւններով:

Ժողովուրդը ընդունելով բանա.
խօսին բանաձեւը յանձնախումբ
մը ընտրեց և անոր յանձնեց կազ.
մել պարսաւագիրը ու տնօրինել

պէտք եղածին պէս:
Յանձնախումբը նախապէս կարճ
պարսաւագիր մը կազմեց և հե.
ռագրով հաղորդեց հին Հնչակեան
կեդրոնին, պատճէն մըն ալ վե.
րակազմեալներու կեդրոնին: Ա.
ւելի երկար գրութիւն մը պիտի
գրկուի նամակով, Յանձնախումբը
որոշեց հրաւեր կարգալ ար.
տասնամանի հայութեան նոյն ձե.
ւով բողոքելու համար:

Գրուող բողոքին մէկ պատճէնն
ալ պիտի շրկուի Հ. Յ. Գաշն.
Արեւմտեան Բիւրօին

ՊԱՐՍԱԿԻՐ

Հին Հնչակեան Կեդրոնին
ԼՈՆՏՈՆ

Ժամանակէ մը ի վեր Հնչակ.
եան երկու հատուածները բուն
հալածանք մը սկսած են իրարու
դէմ՝ իրենց օւկաններու միջո.
ցաւ, զիրար ամբաստանելով զա.
նազան զեղծութիւններ և Հնչակ.
եան միութեան վերջին պատակ.
տումի մասին:

Հրագրական այս պայքարը թէ
և շատ անխորհուրդ և շատ ան.
վերապահ կերպով մղուեցաւ,
սակայն որովհետեւ այն, զժառ.
ատար, շատ սովորական բան մը
գարձած է արտասահմանի մէջ,
ոչ ոք կրցաւ գուշակել թէ ան
պիտի արիւնտուտի այնպիսի ոճիր
ներով, որոնք անպատուաբեր են
ամբողջ հայութեան:

Եւ զառն իրականութիւնը ե.
կաւ ապացուցանել թէ լրագրա.
կան կրքոտ կուրը կրնայ ոճիր.
ներու յանգիլ, եթէ ու է յեղա.
փոխական կազմակերպութեան
զեկը գտնուի այնպիսի անձերու
ձեռքը, որոնք ատակ չեն կառա.
վարել իրենց սոցէտ հետեւողնե.
րը և իրենց որոշումները կուտան
անձնական կիրքերէ ու հաշիւ.
ներէ առաջնորդուած:

Այս վտանգաւոր ու զնասուկար
կացութեան մատնուած է Հին
Հնչակեան կուսակցութեան վա.
րիչ մարմինը, որուն պաշտօնա.
կան և կիսապաշտօնական հրա.

տարակութիւնները սպառնալիք.
ներ կը պարունակեն զանազան
ընկերներու հասցէին, որոնց մէջ
կը գտնուէին Գարեգին Զիթճեան
և Միսո—Շահէն: Այս երկու յե.
ղափոխական գործիչներուն սպա.
նութիւնը, ուրեմն, հիմնապէս
վերագրելի է հին Հնչակեան
կեդրոնին:

Յեղափոխական մարմինները
իրաւունք ունին իրենց մէջ գա.
նուած վատ ու զնասուկար տի.
պարները մահուամբ պատժելու:
բայց հին Հնչակեան կեդրոնը
իր հրատարակութեանց մէջ գեւ.
շկրցաւ ապացուցանել թէ Միսո,
Զիթճեան և Խուչպուլեան մահ.
ուան արժանի հայեր են, ընդ.
հակառակ համոզում կը տիրէ թէ
այդ զոհուած ու զոհուելիք հա.
յերը աղգային դատին օգտա.
կարեղսմ են և պիտի կարենան
ըլլալ:

Մենք ալ սոյն համոզումը ունե.
նալով և թարգման հանդիսանա.
լով Վառույթի եկեղեցիին մէջ
զոհներուն հոգեհանգստեան առ.
թիւ հաւաքուած հայ ժողովուր.
դին մտածումներուն և զգացման.
ցը, կը յայտարարենք թէ Շա.
հէնի և Զիթճեանի գաղտնարար
պատուիւրը ԲՅՅԱԲԶ Կ ՈՃՐԱԳՈՐ.
ՄՈՒՔԻՒՆ Է և արատաբեր հայ
յեղափոխութեան, մանաւանդ որ
անիկայ քաջալեր ու թելադրանք
կըլլայ ուրիշ ոճիրներու, որոնք
կրնան կատարուիլ միամիտներու
և գործիք դարձաններու ձեռքով,
և այդպիսով հայութիւնը յեղա.
փոխական ուժերէ կը զրկուի,
այնպիսի ուժերէ, որոնց շատ
պէտք ունին մեր Յեղ. մարմին.
ները:

Հետեւապէս, մենք, պարտա.
ւելով Յեղափոխութեան անունով
կատարուած այդ ոճիրները, նախ
կը պահանջենք ձեռքէ որ անյա.
պաղ միջոցներ ձեռք առնէք
այդ ոճիրներուն շարունակու.
թիւնը անպայման արգիւլելու հա.
մար. երկրորդ՝ ըստ մեր հե.
ռագրական առաջարկի՝ կարգադ.
րութիւն ընել կատարուած ոճիր.
ներուն խնդիրը քննելու և յան.

ցաւորները խիստ պատժի են.
թարկելու համար, նոյն իսկ մահ.
ուան պատժի, ըստ որում զուր
տեղը սպաննողը ինքզինքը մահ.
ուան արժանի կացուցած կըլլայ,
այսպէս կը վարուին ըստ այն
Յեղ. կազմակերպութիւնները ո.
րոնք ու է գաղափար ունին Յե.
ղափոխական բարոյականի վրայ:

ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ
Յ. Կ. Ճանկիւլեան Վարդօ
Կ. Նիզամեան Յ. Գուրպիթեան
Փ. Հալաւեան
1903 Յունիս 22
Վառնա

ՊԱՐՍԱԿԻՐ


Հին Հնչակեան Կեդրոնին
ԼՈՆՏՈՆ

(Հեռագրով)

Վառույթի հայ ժողովուրդը մե.
ծամանութեամբ, առանց կուսակ.
ցական խտրութեան, խոր վիշտ
զգայ Շահէնի և Զիթճեանի ըս.
պանման համար: հոգեհանգստե.
ան առթիւ հաւաքուելով որոշեց
ներկայ պարսաւագիրը ուղղել
ձեռք այդ ոճիրը թելադրողներու
ճակտին պարզ ոճրագործներու
մակդիրը գործելով:

Կեդրոնիդ սոյն մակդիրը իր
ճակտէն մաքրելու համար միայն
մէկ միջոց կայ զոր կառաջար.
կենք—չուտով խառն պատգամա.
ւորական ժողով կազմել. անհրա.
ժեշտ պարագային հրաւիրելով
ուրիշ յեղ. կազմակերպութեանց
ներկայացուցիչներ: յանձնելով
անոր անշատ քննութեան վերո.
յիշեալ ոճիրներու խնդիրը. և
ոճրագործ թելադրիչները պատ.
ժել Հայ Յեղափոխութեան վարկը
փրկելու և զոհերու իրաւունքը
պաշտպանելու համար:

Յանձնախումբ
Յ. Կ. Ճանկիւլեան Վարդօ
Կ. Նիզամեան Յ. Գուրպիթեան
Փ. Հալաւեան
1903 Յունիս 22
Վառնա



ԳԵՆ ԵՃՆ

Երբեմն փոքրիկ, բոտ երեւոյթին անկարեւոր իրողութիւններն ալ մեծ նշանակութիւն ունին, երբ անոնք վճռակ մը կորոչեն, հոգեբանութիւն մը կարողացան, տրամադրութիւն մը կը յայտնեն:

Արգ՝ բազմաթիւ իրողութիւններ գծադրութեամբ շատ գէշ գաղափար կազմել կուտան մեր ուսուցիչներէ շատերու պաշտօնի գիտակցութեան, խղճմտութեան և մանաւանդ նկարագրի մասին:

Միտքը պէտք է պատշաճի ճշմարտութեան և կեանքը՝ պարտականութեան պահանջներուն, սակայն ո՛չ թէ խօսքով, այլ իրականութեան մէջ գործով: Արժանիք մը չէ շատ մը ճշմարտութեանց ծանօթութիւնը ունենալ, պարտականութեան և իրաւունքի գեղեցիկ սկզբունքներ հասկնալ, առանց գործնականի մէջ անոնց հպատակելու, զանոնք իրականացնելու:

Մեր ուսուցիչները իրենց պաշտօնի վերաբերեալ շատ ճշմարտութեանց տեղեակ և պարտականութեանց ծանօթ ըլլալ կը թուին, կամ այնպէս կուզեն ցուցնել, սակայն գործնական կեանքի մէջ շատ քիչ անգամ կը յարմարին տեսականօրէն ընդունած այդ ճշմարտութեանց և պարտականութեանց պահանջներուն: Դժբաղդաբար իրողութիւնները, ուրիշ խօսքով օրինակները բազմաթիւ են այս բաժնի ապացուցանող:

Աջքի փուլ ըլլալ ուզել է, ելնել թերութիւնները մասնաճիւղի այնպիսի խելացի և իմաստուն մարդոց,

որպիսին են մեր ուսուցիչները: Սակայն ես հարիւրին մէկը միայն պիտի ըստ և աւելի գէշ որ իրենք հասկընալով հանդերձ կը թերանան: Խընդիբը ամենաճանճարնալի քննութեանց նոյնքան ճանճարնալի հարցի շուրջն է:

Երկար գրուեցաւ ու խօսուեցաւ մեր հրապարակային աւանդական քննութեանց աննպատակայտրմար ու վնասակար ըլլալու մասին: Տասնեակ ուսուցիչներ, որոնց հետ խօսած եմ, բոլորն ալ նոյն կարծիքը կը յայտնեն, սակայն հակառակ իրենց համոզմունքուն չեն դադրել տակաւին գծուած աւանդական ճամբէն ընթանալէ, հրապարակային քննութիւնները ըստ առաջնոյն շարունակելէ:

Եւ հոտ է ամենաճանճարնալի պարագան: Մոյց տալ թէ խոսովեալ խղճմտանք մը ունին և շատ մտահոգ են այն պատասխանատու գործին համար զոր տանձնած են, ընդունել որ զի տակաւնօրէն հիմնուած համոզումներու համաձայն և գիտակցօրէն պիտի դատարարակեն մանուկները, դաւանել մանկավարժական հարցերու մասին որոշ կարծիք և համոզում, բայց գործնականի մէջ բոլորովին հակառակը վարուիլ, իրենց ընդունած սկզբունքները դրժել, համոզումները ջրել, մի՞թէ նպատակաւոր անհասկացողութիւն, նկարագրի պակաս և անբարեխղճութիւն:

Բայց աշխարհ արարատ այդպէս է, ինչպէս ուսուցիչները միայն մեղադրելի ըլլան, ո՛վ իր ամէն ըրածին համար որոշ համոզում ու գիտակցութիւն ունի, ո՛վ իր անկեղծ զգացումներուն ու կարծիքներուն համեմատ կը կարգադրէ իր գործերը: Չէ՞

որ մարդիկ ընդհանրապէս իրենց չահը, համարաւոր հասարակութեան սպաննիչ օրէնջ կրնան ընկալի ունենալով կը շարժին:

Այո՛, բայց սուէն մարդ հասարակական գործիչ, գաղափարի գինուոր, ուսուցիչ չէ: Համոզումի, բարոյական քաջութեան և նկարագրի պակասը երբ այսպէս թերութիւն մըն է պարզ անհատի մը համար ուսուցիչը որ նկայագիր պիտի կազմէ, սերունդ պիտի դաստիարակէ, ոճրագործ չըլլա՞ր եթէ դաւաճան է ճշմարտութիւնը և չուզէ լսել պարտականութեան ձայնն:

Ու երբ մեր ուսուցիչներն անոնք որ կը խոստովանին թէ ընդունուած ձեւով հրապարակային քննութիւնները վնասակար են տղայոց ֆիզիքսպէս ու բարոյագէտ, բայց կը շարունակեն տակաւին չին ձեւով քննութիւններ ընել, կեղծ են կամ իրանց համոզումներուն և կամ իրենց գործերուն մէջ, աւելի ճիշդ երկուքին մէջ միանգամայն: Հաստատ համոզում չունենալ և ծանրակշիռ գործ, սերունդ դաստիարակելու պատասխանատուութիւնը ստանձնել, կամ ունենալ կարծիքներ՝ բայց անոնց հակառակ գործել, անձնական կատարելութիւնը ճշմարտութիւնը անտես ընել, հասարակապէս ստոր արարքներ և և հազար անգամ աւելի ստոր երբ գաղափարական համարուած մարդիկ են այդ ընկացքը ունեցողները:

Մեր ուսուցիչներէ ոմանց հրապարակային քննութեանց հարցի հանգեղանած ընթացքը փաստներն մէկն է միայն որ ամենուրեք իրենց անբարեխղճութիւնը, բարոյական կորուստի վտարի ըլլալը կապացուցանէ:

Ու ասոնք գէշ նշաններ են, շատ գէշ նշաններ, ո՛չ թէ միայն մեր դաստիարակներէ շատերու խելութիւնը պարզող, այլ մանաւանդ ապագայ կազմուելիք սերունդին ողբ յայտնող:

Ինչ կապաւէք ըրածին գիտակցութիւնը չունեցող, կամ աւելի գէշ, հասկնալով հանդերձ իր հանգիստը չխանգարելու, շա՛ր չվտանգելու նպատակաւ հոսանքին, փշղ կովին համաձայն գործող վարժապետներու առեւծ դաստիարակութեանն:

Պիոնան  
21 Յունիս 1903  
Թիւրքի

ԹՂԹԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱՄՍԱԿ ԳԵՐՄԱՆԻՍԵՒՆ

Յարանքորթի 18 Յունիս  
Երկրի սահմանադրական օրէնքի համաձայն յունիսի մէջ Գերմանական Բայնսթակի պատգամաւորները վերստին քուէարկուեցան: Ընկերվարականները այս անգամ ալ Պակաս քան 82 պատգամաւորներով Բայնսթակի երկրորդ մեծ կուսակցութիւնը կը կողմնէ, իսկ քուէներու ընդհանուր թիւը ընկերվարականներու անունով տրուած երեք միլիոնի կանցնի: Ասիկա փաստաւոր յաղթանակ մըն է, զոր որտանց կը բաղձայնք Բնակցիւի գարշտած այս երկրին: Թո՛ղ ուրախացնէ մեզ այս պարագան, թէ եւ մեծ յոյսեր չենք կրնար դնել ընկերվարականներուն վրայ, որովհետեւ այս անգամ ալ գերակշռող ուժը կառավարական կուսակցութիւնն էրուն ձեռքն է:

ՍԵՄԻՆ ԱՌՁԵԻ

Տ. ԲՈՂԵԱՆՕՖ

Ձեզի, ազնիւ ընկերուհիներս: Ս. Պեան, Պ. Պեան եւ թ. Սեան Ա. Յ.

(Շար. նախորդ քիւնէն)

Իրիկուան դէմ հիւրերը գային, Սթոյնզի վան ըսաւ թէ ես փոխուեր եմ, մտածեց ժիվքան առանձին մտալով:

«Իրօք փոխուած եմ: Ո՞ր ատենէ ի վեր, եւ ինչո՞ւ:»

Վերջին հարցման ուսերը վերցուցի, «Ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչ հարցում, ինչ մէջ զատ ո՞վ կրնայ գիտնալ իմ մէջ ինչու ինչու ըլլալը»:

Ու քիչ մը ետքը յարեց. «Ըսին թէ Բրոյսթօֆ մարդ չէ եղեր ու կը խնդան: Կը զրպարտեն զայն... Անոնք կը հաստատն տարաձայնութիւններու, կուսակցամոլական զըրպարտութիւններու... Մարդ չէ եղեր, իսկ եթէ ըսեմ թէ ինչ կը խոստանայ Ռոսինօֆին... Չպիտի հաստատային...»

«Բայց ես չկրցայ ըսել—բան մը զիս կը կասեցնէր, ես կը վախնայի որ չհասկնան թէ իմ մէջ բան մը բան մը կ'ըլլայ... Թէ բան մը տեղի կուենայ, որ...»

«Ոչ, ոչ, չեմ կրնար... վանեց իրմէ նեղացուցի մտածում ու դէպի վեր, դէպի ամայի կապոյտը սեւեռեց աչքերը...»

Մթնցաւ: տերեւները կախուեցան ու մրափեցին, Թոնչուի ձայն չլսուիլ: Վտակներուն կարկաշտն ալ գաղթած էր, Չղիկ մը զարնուեցաւ, ինկաւ սեղանին վրայ:

Ժիվքան սարսուռ, ու նորէն հեռուն նայեցաւ, Պարտէզին մէջը մտնելը կոխած էր, Տերեւալի ծառերը ստուերներու կը նմանին, Տունէն քանի մը խոչոր գեղձեր կը տեսնուէին լուսաւորուած կանթեղէն, որ ալ կը վառէր սրահին մէջ:

Ժիվքան, տարածուեցաւ մօր ձայնը երեկոյան լուսնի ամէջ:

Ժիվքան պատասխան չտուաւ: Ու ելաւ կամացուկ մը, կարծես զեռ յոգնութիւնը շտաւ, Հազիւ կը կոխէր, Վեր նայեցաւ, յիշել երկնքի կապոյտը, Բայց գրեթէ հաւաքելով մեկնեցաւ պարտէզէն:

Երբորդ անգամ մայրը կանչեց. —Ո՞ր ես, Ժիվքան —Կուզամ, կուզամ, պատասխանեց անիկա սանդուղի վրայէն: Պառաւ զիմաւորեց զայն. —Ո՞ր միացիր, հո՞ս էիր... Հաց գնելու կերթամ... գուրս մի ելար: Մօրեղբայրդ պիտի գայ:

Ու ժիվքան նորէն առանձին մնաց: Երէկ իրիկուն անիկա կը նստէր միեւնոյն տեղը, երէկ իրիկունը միեւնոյն կաթիլը կը վառէր եւ անոր մօտ կը նստէր... անիկա Ռոսինօֆ... Այս գիշեր ալ պիտի գար: Ժիվքան մերթ կուզէր ու մերթ չէր փախալի որ գայ, որովհետեւ Բանձօֆ պիտի գայ ինչպէս ըստ մայրը Պեաք է առանձին ըլլալ որ խօսակցին... Ոչ, ոչ, անիկա գալու չէ...»

Ձայն մը լսուեցաւ: «Ան է արդեօք, Բանձօֆ ու ժիվքան մայրը կուզային, Ժիվքան ուրիշ ելաւ, ժպտեցաւ, ձեռք տուաւ, ախոհ հրամայեց ու սկսաւ խօսակցել: Անիկայ միւս ժիվքան էր, օրիորդ ժիվքան, զոր քիչ օրէն պիտի ամուսնացնեն, Որովհետեւ ինչպէս յայտնի է, փաստաբանը ուրիշ բանի համար չէր գար: Այլապէս ժիվքան չէր զգար այն քաղցր զոյրը, որ իրեւր կարմրուցի, սոքթօրին վրայ խօսք բացուելուն պէս: Կամ թերեւս անոր համար թէ ան բանախօսութիւն պիտի ընէր: Ո՞վ գիտէ—բայց ժիվքան ժպտեցաւ ու կարմրեցաւ...»

—Կուրախացնէ քեզ այս բանը այնպէս չէ՞, Ժիվքան, հարցուց Բանձօֆ անոր խոսովը նշմարելով:

—Այո, կուրախացնէ, ինչո՞ւ պահեմ, երբոր ճիշդ է, խոստովանեցաւ անիկա:

—Կանանց խնդրին վրայ ըլլալու համար:

—Չեմ գիտեր, թերեւս... Եւ անիկա ու մայրը սկսան խնդալ ինամին ալ չթուանքները պրկեց:

—Ձիս ալ կուրախացնէ՞ զիս ալ... Աստուած բարին տայ:

—Բո՛ւ բերնէք Աստուծոյ սկանչը մտնայ, փոփոսց մայրը:

Բանձօֆ աւելցուց. «Ես դեռ յոյս չեմ կտրած թէ օրին մէկը մեր ամէնքն ալ պիտի ուրախացնեն»:

Ժիվքան ուսերն ամփոփեց, հրեց կանթեղն ու ըսաւ. —Ո՞ր է իրր թէ երեկոյթ պիտի սարքէինք:

Բանձօֆ զարմացած մնաց.

Չէ՞ որ այն օրը չէիր ուզեր... կը բաւէ որ ուզես... կը բաւէ որ ուզես...»

—Ուրեմն ե՞րբ:

—Երբոր կուզես:

—Շարժօ՞ր օրը կամ կերակի...»

—Շարժօ՞ր օրը, կիրակի օրը... Ե՞րբ, վաղը կիրակի օրը:

—Վաղը, բայց շատ կանուխ... Մայրը միջատեց խօսակցութեան:

—Տղու պէս կը խօսիս, Ժիվքան... Շատ կանուխ է եղեր... Չեմ գիտեր ինչ կապաստ: Ահա, հիմակ աստենէ, մինչև, որ մարդը քեզ կուզէ...»

—Հարկաւ... հաստատեց խնամին: Ժիվքան պահ մը մտածելէ ետք ըսաւ.

—Բայց ես ալ չեմ հասկնար թէ ինչու այսքան կանուխ եմ... Մայրը նորէն յանդիմանեց զայն: Բանձօֆ ալ յանդիմանեց:

Ու խօսակցութիւնը շարունակուեցաւ խրատներով ու յորդորներով մէկ կողմէն եւ կիսահեղանակաւ ու անհասկանալի կիսամերժումներով ու կիսահաւանութեամբ միւս կողմէն:

Փողոցի դուռը զարնուեցաւ: Երկու կիները ու հիւրը վախով իրարու երես նայեցան, ոճրագործութեան տեղը գտնուածի պէս:

—«Արդեօք ո՞վ է»:

Ոտնաձայն ալ լսուեցաւ պարտէզին նրբուզիլն վրայ:

«Աղէքսանդր կը վերադառնայ սովորականէն աւելի կանուխ»:

—Սրբա կուզայ, փոփոսց ժիվքան:

Ամեն անձի, ամեն կուսակցութեան որ ճնշուող ժողովուրդներու ազատութեան կը ձգտի, բարի գալուստ կը մաղթենք հայերս: Սկզբունքի խնդիրը հոս մէջտեղ չպէտք է խառնել: Աս իւրաքանչիւրի գիտնալիքն է: Սկզբունքէն առջ մենք անձերու ու գին և անձնուէր գործունէութիւնն է որ կը յարգենք: Մէկը չկրնար արգիլել մեզ մտածելու, խորհելու և զգալու ինչպէս որ կուզենք, նմանապէս ոչ ոք կրնայ մեր զգացմունքները արտայայտելու իրաւունքը յափշտակել, կան պարագաներ սահայն ուր մեր քայլին յարմարութիւնը և գործնականութիւնը լրջօրէն կը ազդարարուի կը պարտաւորինք օրինակի համար յետագայ գէպքին մէջ:

Լայցքիկի շայն ուսանողութեան ընկերակցական խումբը սա հեռագիրը ուղղած է Գերման ընկերակցութեան կեդրոնին:

Էլայցքիկի  
Ընկերակցական կուսակցութեան  
Տեսչութիւն  
Պէրլին

Գերմանական ընկերակցականութեան փառաւոր և զօրաւոր յաղթանակին առթիւ միջազգային սօցիալիզմի դասական Բանկի քայլի մեր սըրտագին բարեւ և շնորհակալութիւնը կուղարկենք:

Կեցցէ՛ ընկերակցականութիւնը.  
Կեցցէ՛ կարմիր միջազգայնութիւնը.  
Կեցցէ՛ ժողովուրդներու ազատութիւնը:

Հայ ուսանողութիւն, Լայցքիկի.  
Քաղաքագէտ շկրծար համարուի մեր հայրենակից ուսանողներու այս ընթացքը: Շնորհակալութեան հետագիւրը ինքնին և անոր պարունակու-

թիւնը մասնաւորապէս նպաստաւոր են:

1) Գերման ժողովուրդին դէմ թրշնամական հանգամանքի մը երեւոյթը ապա:  
2) Վերաւերել շատ մը գերմանացիներու զգացումները, որոնք ընկերակցական չլլալով հանգերմ կը համակրին հայերուս:

3) Առիթ ապա մամուլին արեղծքը զննադատութեան և աննպաստ նկատուութեանց:  
Առժամաբար մի միայն ընկերակցականները չպիտի կրնան բան մը ընել մեզի. երէ Գերմանիայէն բան մը կ'սպասուի ալ, մենք պէտք ունինք նաեւ ոչ ընկերակցականներու օժանդակութեան:

Ստորագրութիւններէն ալ կարելի է հետեցնել որ Լայցքիկի բոլոր ուսանողները ուղղած են հեռագիրը, մինչդեռ ցորքան կրցայ տեղեկանալ միայն կազմակերպուած հայ ընկերակցականութիւնն է զայն խաւողը: Գերմանիոյ մէջ շատ դժուարաւ կը յատկանշուի հայ քրօքականներ. նոյնքան աչալրջութեամբ և փափկութեամբ վերաբերուելու ենք հայ անուան գործածութեան հետ:

Փաւստուցի

### ԶԵՅԹՈՒՆԻ ՀԱՍԱՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

20 Յունիս 1903 ի Սօֆիա  
Սերրո — Աղբիւր խումբի նախաձեռնութեամբ տեղւոյս Հայաստանցի պանդուխտ եղբայրներէն, ի նպաստ

Զէյթունի հանգանակուած նուիրատուներու ցանկն:

#### ՆՈՒՐԱՏՈՒՔ

Փալուստ Տօնիկեան 18 ֆո. Մխիթար Մինասեան 10 ֆո. Պետրոս Մխիթարեան 10 ֆո. Խորշուա Պետրոսեան 10 ֆո. Յովհաննէս Մխիթարեան 10 ֆո. Մարտիրոս Գոչեան 1 ֆո. Սողոմոն Մինասեան 15 ֆո. Մանուկ Թորոսեան 10 ֆո. Վարդան Պաշիկեան 7 ֆո. Եղիար Մ. Յովհաննէսեան 10 ֆո. Կիրակոս Սեդիկեան 11 ֆո. Պետրոս Պուրչուտեան 2,50 ֆո. Եղբարք Մ. Տէրաբեան 5 ֆո. Ուն 10 ֆո. Գերգաստան 3 ֆո. Յովհաննէս Ղազարեան 2 ֆո. Յովհաննէս Նազարեան 2 ֆո. Սիսակ Վարդանեան 5 ֆո. Հըլլաթ Գրիգորեան 2 ֆո. Յովհաննէս Մուրատեան 3 ֆո. Ուն 3 ֆո. Միքայէլ Ղազարեան 5 ֆո. Մուշեղ Կողակարեան 5 ֆո. Մատթէոս Թակոբեան 5 ֆո. Մկրտիչ Ներսէսեան 2 ֆո. Պաղտասար Սարգիսեան 10 ֆո. Մինաս Նալչաճեան 5 ֆո. Կարապետ Գուրոյան 2 ֆո. Արաւհաճ Իգրայէլեան 1 ֆո. Ուն 1 ֆո. Մկրտիչ Մանուչեան 10 ֆո. Գրիգոր 1 ֆո. Թարութիւն Համբարեան 2 ֆո. Գէորգ Կիրակոսեան 2 ֆո. Ուն 50 սթ. Պողոս Գրիգորեան 2 ֆո. Նշան Մկրտիչեան 3 ֆո. Պողոս Գասպարեան 2 ֆո. Բերովէ Սրապեան 3 ֆո. Արտաշէս 50 սթ. Ուն 2 ֆո. Ուն 3 ֆո. Հրանդ 2 ֆո. Թ. 2 ֆո. Գիւղայեան 3 ֆո. Մէլքոն Այվազեան 1 ֆո. Պաշիկ Սիսոնեան 1 ֆո. Մաղոյ Պաշտարեան 1 ֆո. Մելքոն Թովմասեան 1 ֆո. Աւետիս Մանուկեան 1 ֆո. Մարտիրոս Թովմասեան 1 ֆո. Ուն 1 ֆո. Մարտիրոս Մանուկեան 1 ֆո. Սիմօն Ղազարեան 1 ֆո. Պաշիկ Աստուրեան 1 ֆո. Գրիգոր Զի-

նիկեան 1 ֆո. Գրիգոր Սէֆէրիան 1 ֆո. Թարութիւն Վարդանեան 1 ֆո. Մարտիրոս և Ղուկաս ընկերք 10,50 սթ. Գ. 2. 2 ֆո. Պողոս Փիլիպոսեան 1 ֆո. Թ. ագրատուներ 2 ֆո. Գրիգոր Սիսիկեան 1 ֆո. Սիմոն հաճի Համբարձուեան 1 ֆո. Պուրչուա Պուտեղեան 5 ֆո.

Ամբողջ գումար արժանի գրամ 267,5  
Հանգանակիչ  
Փալուստ Մ. Մեդիկեան  
Մխիթար Մինասեան  
Մարտիրոս Գոչեան  
Այս գումարը խնայողութիւնս ընդունեց յանձնելու համար Վառնայի թաղական խորհրդին, Նոյն նպատակով խմբագրութիւնս ստացաւ և քսան (20) արժաթ լէվ. զոր իրենց մէջ հանգանակելու են. Ֆիլիպպի Հայմասուաւոր վարժարանի վերի դասերու երկսեռ աշակերտները:  
Սրբազրութիւն

#### ՈՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅՈՒԹԵՒՆ

Վառնայի հայութիւնը, ուսանց կուսակցական խորութեան, իր բարոյական պարտքը մասամբ կատարած ըլլալով դէպի հայ յիշակոյթի խորութիւնը և ընկերակցական ձեռքերով սպաննուած Միսոն և Զիթուններ, և նկատի ունենալով որ եղբայրասպանութիւնը ամենակորստաբեր երեւոյթներէն մէկն է մար հայ յիշ. կեանքի մէջ, կառաջարկէ արտասահմանի հայութեան ձայն բարձրացնել և բողոքել այդ ոճիրներուն դէմ. անոնց աղետաբեր շարունակութիւնը անհրաժեշտօրէն արգիլելու համար:

Ծանձնախումբ  
Յ. Կ. ձանկիւղեան  
Կ. Նիզամեան  
Ծ. Գուրպիտեան  
Փ. Հայաւորան

ու. զողանար ոտքի ելաւ բարեկամը զիմաւորելու:

Մայրն ու Բանձօֆ դժգոն մնացին, այսու հանդերձ երկուքն ալ սիրով պատասխանեցին բարեւին:

Արաս Ռօտինոֆ մտայլ, տխրադէմ ու հիւստած էր: Գիտէր արդեօք թէ այս վայրկենիս երկու սիրտ, թերեւս երեք, թախանձանօք կը հարցնէին, «ինչու կուզաս»:

Գիտէր, բայց ետ չըարձաւ, այլ երեկուան տեղը նստաւ:

Ճնշող, ճեղքացուցիչ լուսութիւն տիրեց:

Ծանկարձ Բանձօֆ սկսաւ խօսիլ.

— Հերթք է որ օտարի պէս իրարու երեսը կը նայինք. Արաս... Անցեալը թող մոռնանք. Եթէ ես ատեն մը... լուց պահ մը նորէն շարունակելու համար, հաճելի է ինձ որ քեզ անապատ կը տեսնամ այս արձակուրդին... Եւ որքան ուրախացայ երբոր իմացայ այսօր թէ տօթթօրը պիտի փրկէ եղբր քեզ անկ կայութենէս...

Ռօտինօֆ ոտքի կանցնեցաւ.

— Որուն համար գոյք ալ պատճառ էք...

Նրեպիտանը այս արհամարհելի խօսքը չլսելու զարկաւ ու շարունակեց զսպած, հանդարտ ձայնով.

— Հաճոյք զգացի ասիկա նոյն իսկ իրմէն՝ տօկթօրէն լսելով, որովհետեւ ես ալ, ոչ թէ պարծենալու համար — ես ալ խօսեցայ հետր... կը թտրան. ձէր... եթէ կարելի է...

— Շնորհակալ եմ ձեր խնամքին. որուն համար, յարեց զետրդին տօթուած:

— Բանիին պիտի սկսի բանախօսութիւնը, հարցուց Ժիվքան ընդ-

ծիվքու համար խօսակցութիւնը, որ կը նախզար թէ սպառնալի չափեր պիտի առնէր...

Բայց ուսանողը անոնց լսելու շարունակեց ոտքի վրայ զլիարկը ձեռքին.

— Իրօջօֆ բարեկամս է... Բարեբարս ալ ըլլալ կը մտածէ (Ժիվքան սարսուռ այս խօսքերէն) — շատ լուս... Սակայն թրմիտօրի համար ուրիշ բանախօսութիւն պէտք է... Ան աղիլու պիտի ընէ, եթէ իր հիւստանդները նայի... Իսկ եթէ անպատճառ բանախօսիլ կուզէ, թող իցոյց հանէ նախ ձեր իր առաջին բարեկամին անվայելութիւնները, գողութիւնները... Ձեր գողութիւնները, կը լսէք, շարունակեց հազէ մը ետք:

Ես կուզէի միայն այսչափ ըսել. բայց ատանկ երեսիդ զարնեմ, ու ասոր համար եկայ... Գիտեմ թէ կարեւոր բացատրութիւններ ունիք... Արգեթ ըլլալ չեմ ուզեր, Բայց ալ չըմ կրնար համբերել... Ասիկա զիս կը լսեղդէր... Բարեբար համար դրուեցաւ: Գրողը չեմ գիտեր. Կուք պէտք է գիտեաք: Հիմա կարգն իմ է հրատարակելու, բայց ոչ թէ լրագրական յօդուած մը. որմէ մէկ անուն միայն մնայ. ինչպէս էր այն օրուանը, այլ այլ վկայաթղթեր, վկայաթղթեր, կըսէք, վկայաթղթեր:

— Ատիկա չպիտի ընես, մոնչեց Բանձօֆ: Չես ամչնար... Ես քու հօր եղբայրք եմ թէ պատուաւոր, թէ ազգեցիկ մինչեւ իսկ քեզ կօքնեմ... Ետքէն «կարեկիր» եմ, «տէրէպէյ»...

— Ու հրէ՛ջ, դոնց Ռօտինօֆ:

Մօրիցարարը ոտքի ելաւ մագերը ցցուած ու բռունցքը սեղմած:

Ժիվքան ու մայրը անոնց միջեւ նետուեցան:

— Արաս, ինչ է ըրածդ. Մօրեղբայր, կաղաչեմ... Միտայիլ ինչուք... ինչուք պէտք... Արաս, նստէ, հերթք է...

Իսկ Բանձօֆ կարծես քաջալերուած տանտիրուհիներուն միջամտութեան սկոտաներուն տակէն մրտաց:

— Զիվք կըսէ անոնք. «Կերակրէ չունը որ...»

Ուսանողը նորէն բռնկեցաւ: Որչափ որ մեծ ըլլար Ժիվքային ազաւոր ձայնին իշխանութիւնը ու նայուածքին ուժը, ան չէր կրնար ինքզինքը զսպել. պէտք էր խօսիլ որ իր կուրծքը սեղմող ու ճնշող բեռը թեթեւցէ:

— Եթէ երեք տարի առաջ ինձ տրուած նպատանիդ ձեր քսակէն էր եւ ոչ թէ գաւառային գանձէն, կընդգուճիր... «Կերակրէ չունը որ վրադ հաճէ» Բայց գուք դուք ինչ տեսակ չուն էք որ ոչ միայն կը հալէք, այլ կաշին կը հանէք. կը պատառէք գիւղացիները որոնց մերկ կոնակին միջոցաւ հղաք Բանձօֆ, հարուստ, փաստաբան, երեսփոխան... ու ան պիտան... Ու հրէ՛ջ, այո, ու հրէ՛ջ, որովհետեւ. ձեռքս ես կեղծ վկայաթղթերը:

— Արաս, մտիկ ըրէ... Հերթք է ալ մօրեղբայրդ է...

— Իրաւունք չունիս մարդոց գործերուն խառնուելու, գոչեց Բանձօֆ կաղաղութեան ըսածը չգիտնալով: Իրաւունք չունիմ. Միայն դո՛ւք ունիք իրաւունք. ո՛վ տուաւ ձեզ այդ իրաւունքը: Ոչ թէ միայն ես այլ վերջին չքաւորն անգամ իրաւունք

ունի խօսելու ձեր պիղծ գործերու մասին, իրաւունք ունի ձեզմէ հանդի պահանջելու... Վերջին չքաւորը, կը լսէք: Զրկարծէք թէ օրին մէկը ան ալ չպիտի խօսի: Ան ալ, անալ իրաւունք ունի կեանքի ու բարեկցութեան ձեզմէ աւելի, ինձմէ աւելի. որովհետեւ ան կը կերակրէ ձեզ, անոր արիւնը ծծողներ... Իրաւունք չունիմ: Ինչպէս որ արեւին ճառագայթներէն օգտուելու իրաւունքն ունինք ամենքնիս ալ... Իրաւունքը, արեւին պէս ամենու կը պատկանի... Կրնա՞ք լոյսն ալ գողնալ գողներ: Կրնա՞ք անոր կոնստառը ջերմութեամբ լեցնել ձեր անյատակ դրամարկները, զով դրամարկները, արիւնտ դրամարկները, որոնց մէջ ոչ թէ հարստութիւն, այլ մարդկային կեանք կ'ի գիղէք: Փորձեցէք, սպուշներ ու մարդակիրներ...

Ժիվքան նորէն մէջտեղ նետուեցաւ, բարեկամին ձեռքը բռնեց ու սկսաւ աղաչել:

— Արաս հերթք է, մեր վրայ դիմա՛... Ռօտինօֆ...

Բայց տեսնալով որ չըարդիր, ձգեց զայն ու կանգ առաւ սանդուխտի թով աչքերը պարտեղին կողմը դարձուցած, կարծես արգիլել կուզէր որ բարձր ձայնը դրացի դռներու երգիքներուն վրայ շտարածուի...

Թաւրուսեան  
Անդրեաս Գալպատեան  
(Շարունակի՛չի)

ՊԱՊԱՆԻ, ԹԱՏԵՐԱԽՈՒՄԱՐ

Պ. Պապանի վերջապէս յաջողեցաւ տեղաւորուիլ իր ներկայացուցներուն շարքը կանոնադրաբար վերակազմելու համար՝ ընկալելով պարտէզին մէջ Ամառնային եղանակին համար, խումբին վրայ նոր ուժեր աւելցած են. յատկապէս քոմիք մը բերուած է, որ առջի վայրկեանէն ջերմ ընդունելութիւն գտաւ: Պարող աղջիկներ կոչուած են զուարթ ալլազանութիւն մը աւելցնելու ներկայացումանց վրայ՝ արարուած ընդմէջ: Անշուշտ լուրջ տառապանք շարքը չէ որ պիտի ներկայացուի. ինչպէս անցեալ ձմեռ ճիտակէր, այս տարեւուն, յուզմունքը այնքան ախորժելի չէ. աւելի զուարթ տեսարաններ, ծիծաղաշարժ սուսակցութիւններն են որ կը փնտռուին բեմի վրայ: Հայ թատերախումբը այս պէտքը գոհացնելու ամէն միջոցները ունի: Վառնայի հայութիւնը իր զուարճանալու, խնդալու պէտքերն գոհացումը հոն. մի միայն հոն երթալու փնտռելու է. մինչ ուրիշ հասարակութիւններ իրենց ազգակից թատերախումբը քաջալերելու պարտականութեան մէջ չեն թերանար: Եւ պէտք է մտածել որ հիմակուան նիւթական քաջալերէն ուղղակի կախում պիտի ունենայ լուրջ տառապանք ներկայացումանց հնարաւորութիւնը ձմեռ եղանակին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազատական կուսակցութեան երրորդ համագումարը հաւաքուած է Սօֆիայի մէջ. մօտ հինգ հարիւր պատգամաւորներ կը մասնակցին այդ համագումարին: Համագումարին գլխաւոր նպատակներէն մէկն է պարտաւել դատարանին՝ հանդէպ նախկին նախարարներու տուած դատաւճիռը և որոշել թէ կուսակցութիւնը ինչ դիրք պիտի բռնէ իր պայքարը շարունակելու և պարտականութիւնները դէպի հայրենիքը կատարելու համար:

— Կառավարութիւնը արդիւր է ձի, շորի և այլ կենդանիներ թուրքիայ շրջել:

— Կը մտածուի Պոլսոյ դորձակատար Պ. Գէշէֆի փոխարէն նշանակել Տր. Գաթէֆը:

— Ընդդիմադիր մամուլը իր յարձակողական յօդուածները կը շարունակէ իշխանին և նախարարներուն դէմ, զանոնք հակասահմանադրական ներկայացնելով:

— Կառավարութիւնը կը մտածէ Հոռովի մէջ գործակատար մը նշանակել. վերջերս Իտալիոյ պալքաններու հանդէպ բռնած գիրքը աչքի առջեւ ունենալով:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Բ. Գուռը կը բացատրէ որ Լուսինիա գացող արշաւախմբին նպատակն է Ա. ժողովուրդը համբել, Բ. հարկերը հաւաքել, Գ. քանի մը պտհուրտած Ալպանացի շարագործները ձերբակալել:

— Բ. Գուռը կը յուսայ որ երեք շաբթուան մէջ պիտի կարենայ վերջացնել Ալպանացիներն ճընչելու համար եղած պատերազմական գործերը, և ապա իր ամբողջ ուժը գործ դնել Մտկեզունական ապստամբութիւնը խզելու համար:

— Պիտայի կը հեռագրեն որ թուրքիան Պուլկարիոյ սպանուական դիրք բռնելուն հանդէպ երեք պատերազմական գիրքեր բռնեն. Գիւստէնտիլի, Էտիրենէի և Բիթոլիայի քովերը:

— Սելանիկէն հիւսուտաններու տուած տեղեկութիւններէն կիմացուի որ նահանգին վիճակը միշտ յուզուած է. թուրք զօրքերու և հրոսախմբերու միջեւ յաճախակի ընդհարումներ տեղի կունենան:

— Կառավարութիւնը պետութեանց գեապաններու պատասխանած է որ Պուլկարիոյ պահանջները անհիշելի են իսկ զօրքերուն միակ նպատակը հրոսախմբերուն թուրքիա մուտքը արգելելն է:

— Կըսուի թէ Պոլսոյ ստորկանութիւնը մեծ քանակութեամբ տինամիս գտել է որով և Սուլթանը մեծ վախի մէջ ինկած է:

— Կառավարութիւնը որոշած է Պուլկար սահմանազխին վրայ գտնուող պահպան զօրքերու թիւը շատցնել:

ՌՈՒՍԻԱ

Լուրը որ տարածուեցաւ թէ Տարը այնչա Իտալիա չը պիտի երթայ Իտալացի ընկերվարականներուն Ցարին հանդէպ բռնած թշնամական գիրքին պատճառաւ սխալ է:

Ցարին ճամբորդութիւնը միայն յետաձգուած է, որովհետեւ բըժիկները պատերազմ են քանի մը ամիս հանդիստ կեանք անցնել Արիմէի կուլաւածքին մէջ և բոլորովին չըբազիլ պետական գործերով:

ՍԵՐՊԻԱ

Նոր թագաւորին կողմէ արքայապան սպաննու եղած նշանակիչ վարձատրութիւնը զժողովութիւն առաջ բերած է գաւառներու զօրքերուն մէջ:

Նիշի և Գրոկովցի սպայք ժողովով մը բուռն կերպով ընդդրած են

Երգմնագտրուածներուն հանդէպ եղած այդ բարեմտութեան գէմ, Գժողովութիւնը աւելի մեծ շափեր առած է երբ իմացուեր է թէ մայրաքաղաքին զօրքերը առատ դրամ կընդունին, մինչդեռ զաւաններունը երեք ամսէ ի վեր ուժիկ չեն ընդունած:

Սերպիոյ պաշտօնական յայտարարութիւնը գրամ ունենալու մասին բոլորովին սուտ է. պետական գանձարանը բոլորովին զատարկ է, և առեղծուած կը համարուի թէ դրամը ուսկէ կը գրտնեն. . . ոճրագործները վարձատրելու համար:

ՊԱՐՍՎԱՍՏԱՆ

Թէհրանէն Կոնստանտինոպոլիս կը հեռագրեն որ խոստովութիւնները կը շարունակուին գրեթէ բոլոր նահանգներու մէջ. Կոնստանտինոպոլիսը հրդեհներ են քանի մը գիւղեր և քանէն աւելի մարդ սպաննու են: Ճամբորդներ կան թաւառուած:

Ամերիկեան և գերմանական միսիօնարները հեռագրով օգնութիւն խնդրած են Ռուսիոյ և Անգլիոյ հիւսուտաններէն:

Ինչպահանքի քիւրաքը ապրտամբած են կառավարութեան գէմ. նահանգապետը չի համարձակիր իր պալատէն դուրս ելալ:

ՃԱՐՈՆ

Թիէն-Ցինէն կը հեռագրեն թէ ճարոնի ներկայացուցիչը յայտարարած է որ պահեստի զօրքերուն կանչուելու լուր բոլորովին անհիշելի է, ճարոնը պատերազմի համար պատրաստ է բայց պէտք չունի պարզ քաղաքացիները դրոշակի տակ հրաւիրել. որը պատճառ պիտի դառնար վաճառականութեան ա՛րճան:

ՅԲԱՆՍԱ

Երեսիտիանական ժողովը և ծերակոյտը միաձայնութեամբ ընդունեն են արաաքին գործոց նախարարի Լուպի Անգլիա ճամբորդելու և Իտալիոյ թագաւորին ընդունելութեան համար պահանջած 600 հազար Ֆրանքին վարկը:

ՍԵԼԱՆԻԿ ՍԱՐՍԱՔԻ ՄԷՉ

Սելանիկի մէջ լուրեր կը պրտորին որ Պուլկար յեղափոխականները կրկին մտադիր են ցուցեր ընել հոն: Աւստրիական և Ռուսական զեապանները այդ մասին նախապէս իմացնելով Բ. Գուռան, վերջինս տեղեկութիւն հարցնելով տեղական Վալիէն, հեռագրով պատասխան ընդունած է որ ինք անձամբ կերաշխաւորէ խաղաղութիւնը և կարգապահութիւնը. իսկ եթէ հրոսախմբեր և անհասաներ մտադրութիւն ունին վտանգաւոր գործ մը ընելու, անոնց ծրագիրն էր շուրջ պիտի իյնան: Բոլորհետեւ ապահովութեան համար լայն միջոցներ ձեռք առնուած են:

Սելանիքի հասարակութիւնը սարսափի մէջ է. որովհետեւ անցեալ օր իմացեր է թէ հրէական գպրոցի մը մէջ քանի մը աղաքներ թունաւորուեր են: Այդ դէպքը հետեւեալ կերպով տեղի ունեցեր է և կը վերագրուի պուլկար յեղափոխականներուն:

Աշակերտները դպրոցի բակին մէջ շաքար կը գտնեն և իրար մէջ ըմբռնելով կուտեն: շուտով թունաւորումի նշաններ կերեւան. ուսուցիչ մըն ալ կուտէ այդ շաքարէն ու նոյնպէս կը հիւանդանայ:

Մէկ վայրկեանի մէջ լուր կը տարածուի որ արդէն քանի մը աշակերտներ մեռած են:

Մնողներ կը թափին ուսումնարան իրենց զաւակները փրկելու համար:

Դպրոցը գոցուած է. թունաւորման խնդիրը գեռ պարզուած չէ:

ԹԱՏՐՈՆ ՐԻԿԱ

ՀԱՃԻ ԲԱՆԱՔՕ

Ներկայացուցի ռՍՏԷՃՏԱՆ Հայ դերասանական խմբին առաջնորդութեամբ Պ. Վ. ՊԱՊԱՆԻ:

1903 Յունիս 25 հիւնդաքթի երեկոյ ճիշդ ժամը Յին պիտի ներկայացնէ ԱՐՁԱՆԱԳՈՒՄԸ թատերախաղ 3 արարուած 1 պատկեր:

Սիսո ծիծաղաշարժ վաւելտ մկարար Պուքէշէ նոր հասած Հայ ազգի հանրամասնօթ գոմիկ Հանի Յակորի կողմանէ:

Երգ և պարերգ Օր. Օլկայի կողմէն

(Հոգիւն և Հովուհիւն)  
Պար Օր. Օլկայի և հանի Յակորի կողմէ

ՈՐՈՒՏԻ 50 ՍԱՆԹԻՄ

ОГОВОРИМЪ  
Мурадъ-Ераносянъ  
Печатница „Взаимность“ Варна